# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
## «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան — 27 դեկտեմբեր 2017թ.
ժամը $14^{30}$

**Մասնակցում էին**
*Գնահատողներ*՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՄ ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան:
**Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Գ. Վարդանյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Վարդանյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «մսեղիքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Բայազետ 1» ՍՊԸ |
| 2 | «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Վարդանյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Բայազետ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի վճարման պահանջագրի, որտեղ «վճարողի ստորագրություններ» մասում արտացոլված էր միայն Արամայիս Եպիսկոպոսյանի («Բայազետ 1» ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված անձ) էլ. ստորագրությունը: «Բայազետ 1» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված լիազորագրի («Բայազետ 1» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված Արամայիս Եպիսկոպոսյանին՝ էլ. ստորագրությամբ սույն ՍՊԸ-ի կողմից մասնակցվելիք մրցութային բոլոր գործընթացները, դրանց հետ կապված փաստաթղթերը հաստատելու) հետ կապված հանձնաժողովը քվեարկության արդյունքում՝ 4 կողմ և 1 դեմ (դեմ քվեարկած գնահատող անդամ ՀՀ ԶՈՒ թիկունքի պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյանի հատուկ կարծիքը կցվում է) որոշեց, հետագա ռիսկերից խուսափելու նպատակով, մասնակցի բանկից հայցել տեղեկատվություն առ այն, թե Արամայիս Եպիսկոպոսյանի կողմից էլ. ստորագրությամբ վավերացված «Բայազետ 1» ՍՊԸ-ի վճարման փաստաթղթերը արդյոք ենթակա են կատարման թե ոչ: Սակայն քանի որ, 24.01.2018թ դրությամբ բանկի կողմից ոչ մի պատասխան չի ստացվել, գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել պատվիրատուի ղեկավարին: 24.01.2018թ. պատվիրատուի ղեկավարի կողմից ստացված հանձնարարականին համապատասխան գնահատող հանձնաժողովը շարունակեց սույն ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերի գնահատումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Գ. Վարդանյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակ | Նախահաշվային գումար | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպություն | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպություններ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | խոզապուխտ (խոզապուխտ (սենդվիչ)) | կգ | 1579 | 4 064 346 | «Բայազետ 1» ՍՊԸ | | 2 842 200 | «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ | 3 372 480.83 | 4 046 977 |
| 2 | տավարի և հորթի մսից պատրաստված արտադրանք (Բաստուրմա) | կգ | 632 | 3 649 168 | «Բայազետ 1» ՍՊԸ | | 2 654 400 | «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ | 3 035 180 | 3 642 216 |
| 3 | տավարի և հորթի մսից պատրաստված արտադրանք (Սուջուխ) | կգ | 316 | 1 445 384 | «Բայազետ 1» ՍՊԸ | | 821 600 | «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ | 1 201 590 | 1 441 908 |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:
**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ. Վարդանյան)

4.1 30.01.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Բայազետ 1» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ. Վարդանյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:
**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

Գնահատող — Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գնահատող — Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գնահատող — Տ.ՀԱՐՈՅԱՆ

Գնահատող — Ս. ՆԻԿՈԼՅԱՆ

Գնահատող — Ա. ՄԱՂԱՔՅԱՆ

Գնումները համակարգող՝ — Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**<<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ - ԳՀԱՊՁԲ-7/3>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ԿԱՐԾԻՔ**

**(ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ)**

Հանդիսանալով <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ - ԳՀԱՊՁԲ-7/3>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ՝ <<Դեմ>> եմ քվեարկել նիստի արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետի վերաբերյալ, որի շուրջ ունեմ այլ՝ հատուկ կարծիք, մասնավորապես.

հաշվի առնելով, որ նախկինում կազմակերպված գնման գործընթացներում բազմիցս հանդիպել են նմանատիպ դեպքեր (կազմակերպության տնօրենի կողմից լիազորված անձը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում է հայտը), որոնք համարվել են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին բավարարող և հետագա ընթացքավորման համար ընդունելի, ինչպես նաև ներկա պահին առկա են նմանատիպ գործողության ժամկետը չավարտված այլ հայտեր և վերը նշված որոշումը կարող է առաջացնել նախադեպային խնդիրներ:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների միջև առկա են զգալի տարբերություն, ընդ որում, նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել <<Բայազետ1>> ՍՊԸ-ն:

**ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**գնդապետ** **Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ**